ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ Հայոց լեզու և գրականություն

Թեմա «Աբու-Լալա Մահարի » պոեմի ուսուցման իմ փորձը

Հետազոտող՝ Վարդուհի Մկրտչյան

Սյունիքի մարզի Գորիսի թիվ 4

ավագ դպրոց հայոց լեզվի և գրականության

ուսուցչուհի

Ղեկավար՝ Նելլի Ղուշունց

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ առաջին

1.Դասի պլան_____6

Գլուխ երկրորդ

2.Գրական խմբակ մեթոդը_____9

2.1 Գրական նյութը ցուցադրող_____8

2.2 Քննարկումը վարող_____9

2.3 Գրական նյութը լուսաբանող_____11

2.4 Բառապաշարը հարստացնող խումբ_____17

2.5 Կապակցող խումբ_____23

2.6 Ամփոփող_____25

3.Եզրակացություն_____25

4.Գրականության ցանկ_____30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակարթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Հանրակրթայկան դպրոցում գրականության ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Գրականության ուսումնասիրությունը առաջարկվում է կառուցել հետևյալ սկզբունքներով.

Ժողովրդավարական. սովորողը մասնակցում է ուսումնառության պլանավորմանը և դրա իրականացման գործընթացին, նրա կարծիքի և հետաքրքրությունների հիման վրա են ծրագրվում նյութի բովանդակությունը, մշակվում ընթացիկ աշխատանքները:

Անձնակենտրոն կամ սովորողակենտրոն ուսումնառություն. սովորողն ինքնուրույն է, աշխատում է հիմնականում դասարանում՝ ուսուցչի և ընկերների հետ համագործակցելով: Ուսումնառության գործընթացում շեշտադրվում են սովորողի անհատականությունը, անձնային ներդաշնակ զարգացումը, սովորելու ոճը, հետաքրքրությունների և կարիքների շրջանակը: Սովորողը նախագծում և իրականացնում է տարաբնույթ հետազոտություններ:

Տարբերակված ուսուցում. ուսումնառության բովանդակությունը, կրթական միջավայրը, տրվող առաջադրանքները, չափորոշչային պահանջները ձևավորվում են՝ հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պահանջները, կարողությունները:

Գրականության ուսումնառության նպատակներն են բանավոր և գրավոր խոսքի առկայություն, մշտական զարգացում և կատարելագործում, գրական-գեղարվեստական տեքստերի լեզվաոճական վերլուծություն, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննություններ: Գրականության ուսումնառության վերջնարդյունքները մշակված են գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների, պահանջների,

սահմանված կարողունակությունների հիման վրա: Արդի դարաշրջանում երկչափ կրթությունից՝ գիտելիք - կարողություն կամ հմտություն, անցում է կատարվել եռաչափ կրթության՝ հասկացություն – գիտելիք – կարողություն/հմտություն:
7-12-րդ դասարանների գրականության ուսումնասիրության համար սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

Ընթերցանություն՝ բովանդակություն և ձև

Ստեղծարարություն՝ տեքստի հետազոտում և տեքստի ստեղծում

Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում:

Ուսուցման նպատակներին հասնելու համար ուսուցիչը խոսքային մեթոդների հետ / պատմություն , զրույց , բանավեճ , հաղորդում , ռեֆերատ / համատեղ պետք է օգտագործի բազմազան մեթոդներ , տեխնոլոգիաներ :

Գրականության ծրագրի ուսուցվանող նյութերի մեջ առանձնակի տեղ է գրավում Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը: Այս ստեղծագործությունը բոլոր ժամանակների համար ունի դաստիարակչական կարևոր նշանակություն:

«Իսահակյանն «Աբու-Լալա Մահարի» պոեմով հայ բանաստեղծությանը հաղորդեց աննախադեպ փիլիսոփայական իմաստ: Բարձրացնելով ու շոշափելով գլոբալ նշանակություն ունեցող համամարդկային հարցեր, դրվածքներ, նա հասավ այնպիսի ընդհանրացումների, եզրահանգումների, որ իրենից առաջ բնորոշ է եղել միայն Նարեկացուն: Եվ Նարեկացու հանճարեղ պոեմի ստեղծումից ինը դար անց Իսահակյանը հայ փիլիսոփայական պոեզիան էականորեն առաջ մղեց, ի զորու եղավ **այն զարգացնել համամարդկային արժեքների տեսանկյունով»**[1]**:** «Աբու-Լալա Մահարի» պոեմը կրում է պատմական բարդ ժամանակների անցման և ընթացքի հևքը: Հնօրյա մարգարեներից Զրադաշտը հարցնում է.«Իսկ հապա ե՞րբ կընթանա մարդկության քարավանը արդարության ուղիով»: Զրադաշտի նման Իսահակյանն էլ չգիտեր, թե երբ, սակայն անհամբեր և անհանգիստ ձգտում էր արագացնել քարավանի երթը դեպի արդարության ուղին:[2] Եվ մեկ դար է անցել Իսահակյանի հանճարեղ պոեմը գրելուց հետո, և նորից մենք սպասում ենք մարդկության քարավանի արդարության ուղիով անցնելուն: Դա հաշվի առնելով՝ անդրադարձա

[1] Ավիկ Իսահակյան «Աբու-Լալա Մահարի պոեմի հերոսը և հեղինակը» էջ2
[2] Հայ նոր գրականության պատմություն էջ 366

այս գեղեցիկ ստեղծագործությանը՝ ցույց տալու Իսահակյանի անսահման սերը կյանքի հանդեպ՝ չնայած աշխարհակործան քաղաքականությանը: Այսօր էլ հույսներս չպիտի կտրենք, անցնենք պայքարի՝ ոչ ռոմանտիկական, այլ ռեալիստական:

Դասին կիրառել եմ «Գրական խմբակ» մեթոդը, որտեղ ամեն խումբ ունի իր առաջադրանքը, և մյուսների համար լուսաբանում է նյութը, հարստացնում է բառապաշարը, երկը կապակցում է այլ ստեղծագործությունների հետ, արդիականացնում է, ցուցադրում իր ընկալած ձևով: Նպատակս է բացահայտել և՛ մեթոդի արդյունավետությունը, և՛ ստեղծագործության արդիականությունը:

Գլուխ առաջին

1.Դասի պլան

Դասարան-11 դասարան

Թեմա – «Աբու-Լալա Մահարի » պոեմի ուսուցման իմ փորձը . ամփոփման դաս

Դասի նյութը **- Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը:**

Դասի տևողությունը - 90 րոպե

Դասի նպատակները՝

ա. ակադեմիական

Իմանա ՝ Ա - «Աբու-Լալա Մահարի» պոեմը: Երկի սյուժեի և կառուցվածքի ընկալում, ժամանակաշրջանը:

Բ – Ավետիք Իսահակյանը որպես ռեալիզմի ներկայացուցիչ: «Աբու-Լալա Մահարի»-ն որպես ռոմանտիկական, քնարական պոեմ: Երկի տեղծագործական պատմությունը, սյուժեի և կառուցվածքի ընկալում, կերպարները: Լքված աշխարհի քննադատությունը:

Գ - «Աբու-Լալա Մահարի» պոեմը, երկի սյուժեի և կառուցվածքի ընկալում, պոեմում նկարագրվող պատմական ժամանակաշրջանը, կերպարները, լեզվաոճական առանձնահատկությունները:

Կարողանա ՝ Ա -Գրական ստեղծագործությունը վերլուծել, գրական կերպարները բնութագրել, հասկանալ և գիտակցել անհատի ողբերգությունը:

Բ- Նրանց մասին վերլուծական բանավոր և գրավոր խոսք կազմել, իմանալ և խորացնել գիտելիքները, ճիշտ գնահատել պոեմի ստեղծման շարժառիթները:

Գ – Արաբ բանաստեղծ Աբու Ալ Ալա Մահարու/973-1057թթ/ ստեղծագործություններից հատվածների ընթերցում և համեմատում Իսահակյանի պոեմի հետ, պոեմի հատվածների լեզվաոճական վերլուծություն: Փախուստի հոգեբանական հիմնավորումը՝«**Ճանաչեց և խորագին ատեց մարդուն և նրա օրենքները**» Գրականության նյութի՝ այլ առարկաներից առնչվող թեմաներին կապակցելու, քննարկելու, վերարտադրելու հնարավորությունների դրսևորում:

բ. Սոցիալական - Հաղորդակցվելու, խմբում համագործակցելու հմտության դրսևորում, վերարտադրելու, հերոսներին բնութագրելու, հատկանիշները

գնահատելու, գլխավոր առանձնահատկությունները կարևորելու, ազգային կարևոր արժեքներրի գնահատում, քաղաքացիական ընկալումների ձևավորում:

Վերջնարդյունքներ

Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը:

Գտնի գլխավոր առանցքային հարցադրումները, ճանաչի արդիականությունը, հիմնավորի՝ կյանքից և գրականությունից գտնելով համապատասխան օրինակներ:

Ուսումնասիրի և մեկնաբանի ստեղծագործության բառապաշարը:

Հասկանա և մեկնաբանի խոսքի արտահայտչամիջոցների կիրառությունը՝ միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով:

Համեմատի, զուգադրի և հակադրի տեքստերը:

Ճանաչի և տարբերակի ստեղծագործության սեռը, ժանրը՝ ելնելով գրական առանցքային առանձնահատկություններից:

Մեկնաբանի գրական երկի, գրական կերպարի զարգացման պատճառահետևանքային կապերը, մեկնաբանի՝ ելնելով ժանրային առանձնահատկություններից:

Համեմատի՝ համադրի և հակադրի տարբեր հեղինակների կողմից կերտված կերպարների առանձնահատկությունները:

Միջառարկայական կապեր- երաժշտություն, նկարչություն- ցույց տալ զգացողությունների արտահայտությունը երաժշտության, նկարչության մեջ:

Լեզուներ. Ցույց տալ արվեստի մյուս ճյուղերին բնորոշ լեզվի / հնչյուն, գույն, նյութ/ դերը կերպար, միջավայր, գաղափար ստեղծելու գործում:

Հասարակագիտություն. Սոցիալական և անձնային հարաբերությունները՝ պայմանավորված կոնկրետ ժամանակաշրջանով և մշակութային առանձնահատկություններով:

Պատմություն. Պատմական ժամանակաշրջանի, երևույթների անդրադարձ՝ կապված բանաստեղծության մեջ ներկայացվող ժամանակաշրջանի, պատմական իրադարաձությունների հետ:

Ինտեգրված առարկաներ – հայոց լեզու, հայոց պատմություն, հասարակագիտություն,աշխարհագրություն, երաժշտություն, նկարչություն, ՏՀՏ:

Հիմնական հասկացություններ – Ռոմանտիկական քնարական պոեմ,փախուստը իբրև գեղարվեստական հնարանք, կապիտալիզմ, ժխտում, իդեալի և իրականության հակադրություն, արատավոր աշխարհ:

Դասի կահավորումը՝ Ավետիք Իսահակյանի դիմանկարը, սահիկահանդես՝ նվիրված «Աբու-Լալա Մահարի» պոեմին, մարկերներ, գծակարգեր, ձայնագրություններ, ասույթներ, գնահատանքի խոսքեր:

Մեթոդներ, հնարներ՝ «Գրական խմբակ» մեթոդը, որի յուրաքանչյուր բաղադրիչ իրականացնում է խմբերից մեկը, «Մտագրոհ», «Երեք բանալի և մեկ կողպեք», քառաբաժան:

Դասն անցկացնել ԽԻԿ համակարգով: Խմբերը հենակետային փորձագիտական են, ձևավորել նախապես:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԵՐԹԱՇԱՐ

Խթանում -1. Հանդես է գալիս «**Ցուցադրողների խումբը»:** Նախապես ձևավորած պաստառներով ստեղծել են համապաստառ և մեկնաբանում են արված նկարները, ներկայացնում պաստառի նկարների և թեմայի կապը, ցուցադրում սահկահանդեսները:

https://docs.google.com/presentation/d/1jR4bnThiNt3_W4vSuu6rE3ryXdSkQGBM/edit?usp=sharing&ouid=104784949992122369223&rtpof=true&sd=true

https://sway.office.com/F5b1hPFGH10zSaup?ref

https://sway.office.com/6WdqALbhovZXjwtI?ref

Իմաստավորում - 1 քայլ – ստեղծել ստեղծագործության սյուժեի քարտեզը, տալ ստեղծագործության կառուցվածքի նկարագիրը:

2 քայլ - նախապատրաստած նյութը ներկայացնում է «**Քննարկումը վարող**» խումբը

3 քայլ - նախապատրաստած նյութը ներկայացնում է «**Գրական նյութը լուսաբանող**» խումբը:

4 քայլ - նյութը ներկայացնում է «**Բառապաշարը հարստացնող**» խումբը: Մեկնաբանում է հեղինակային բառապաշարի նրբությունները՝ կանգ առնելով հոմանիշների վրա:

5 քայլ – Կատարել learningapps.org-ի հոմանշային և պատկերավորման-արտահայտչամիջոցների հետ կապված վարժությունները:

6 քայլ - «**Կապակցող խումբը**» ներկայացնում է իր նյութը ‹‹Աբու-Լալա Մահարի›› պոեմը այլ ստեղծագործությունների հետ զուգադրող, համեմատող, վերլուծող ներկայի և անցյալի կապը ստեղծող, այլ թեմաների հետ առնչվող:

Կշռադատում - Ամփոփում

7 քայլ - նյութը ներկայացնում է «**Ամփոփող**» խումբը:

Կշռադատման փուլն ավարտել թեմային վերաբերող հարցաշարով:

Գնահատում Անհատական գնահատումը հարցաշարով:

Խմբային գնահատումը սյունակաշարով:

Տնային աշխատանք Ստեղծագործական, վերլուծական շարադրանքներ:

Ծանոթություն – Բոլոր ենթադրվող պատասխանները համապատասխան էջերում:

Գլուխ երկրորդ

«Գրական խմբակ» մեթոդը

2.2 ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂ Խումբ ----------

Գրքի վերնագիրը – «Աբու- Լալա Մահարի » ***պոեմը*** **Առաջադրանք էջ --մինչև --գլուխ**

Ձեզ հանձնարարվում է կազմակերպել խմբային քննարկումը: Ձեր անելիքներից մեկն է կազմել այն հարցերի ցուցակը, որոնք քննարկելու եք պոեմի դիպաշարի առնչությամբ: Օգնեք խմբի անդամներին քննարկել գրքի հիմնական կամ կարևոր մտքերը և միմյանց հետ կիսել իրենց մտքերն ու զգացմունքները;

Աշակերտները սկզբում նշում են, որ Իսահակյանը իր երկերում պատկերում, ցույց է տալիս բուրժուական աշխարհի անարդար օրենքներն ու այլանդակ բարքերը, նրանում տիրող ահավոր ճնշումն ու հարստահարումը, բնության ու մարդկության ստեղծած բոլոր բարիքների յուրացումը սակավաթիվ ունևորների կողմից: Բանաստեղծը քննադատում է և ժխտում այդ հասակարգը:

Սակայն Իսահակյանը բուրժուական հասարակարգն ավելի համարձակորեն քննադատում և ժխտում է «Աբու-Լալա Մահարի» պոեմում, որը գրում և հրատարակում է 1909 թվականին, ռուսական առաջին հեղափոխության տապալումից հետո, երբ սև, հետադիմական ուժերը, ոչ մի բանի առաջ կանգ չառնելով, հետապնդում, հալածում, բանտարկում ու աքսորում էին ողջախոհ, լուսամիտ, առաջադեմ մարդկանց, և անմարդկային, վայրագ արարքները հասնում են ծայրագույն աստիճանի:

Ահա պոեմի մտահղացման պատմությունը. «1909 թվականին Իսահակյանը ձերբակալվում է: Վեց ամիս նստելուց հետո գրավականով ազատվում է Թիֆլիսի Մետեխի բանտից և վերադառնում Ալեքսանդրապոլ/Գյումրի/: Մի քանի օր հետո Իսահակյանը կանչվում է Երևան հարցաքննության ու դարձյալ մեղադրվում հակացարական գործունեության մեջ: Բանտարկության վտանգը նորից սպառնում է բանաստեղծին և նրա մեջ նորից առաջանում է ցարական իշխանությունից փախուստի տրամադրություն: Ալեքսանդրապոլ վերադառնալիս նա տեղավորվում է իրեն ծանոթ մի մեքենավարի շոգեկառքի մեջ: Բանաստեղծը պատմում է.«Երբ գնացքը դուրս եկավ կայարանից, անցա լոկոմոտիվի /շոգեքարշ/ վանդակավոր պլատֆորմը/ կառամատույց/ և սկսեցի դիտել շրջակա լեռները, հեռագրասյունները, երկաթգիծը, որոնք գնացքի ընթացքի հետ փախչում էին աչքիս առաջին: Եվ քանի գնացքն արագացնում էր իր ընթացքը, այնքան ավելի կրկնապատկվում էին նաև իմ մեջ փախուստի տրամադրությունները: մտածում էի, թե ինչքան լավ կլիներ, եթե գնացքը առանց կանգառի այդպես անընդհատ գնար, դուրս գար երկաթգծից, ցարական տիրակալության սահմաններից և գնար, գնար հեռու, հեռու… Այդ մտածումների մեջ էի, երբ հասանք Սարդարապատ: Լուսնյակ գիշեր էր, հեռվից նշմարեցի Կողբի կողմից եկող ուղտերի մի ծիգ քարավան, իսկական գնացքով փախչելու մտածումներս զուգորդվեցին քարավանի հետ և փոխանցվեցին քարավանով փախչելու ցանկության»:

Կարճատև պրպտումներից հետո Իսահակյանը Ղազարապատում գրում է «Աբու- Լալա Մահարի » պոեմը՝ նրանում մարմնավորելով իր ունեցած ապրումները, խոհերը, տրամադրությունը:

Աբու- Լալա Մահարին, այսինքն Իսահակյանը, ժխտում է, մերժում ու խարազանում այն ամենը, ինչ վերաբերում է մարդկային կյանքին: Հաճախ մտածում են, որ բանաստեղծը վատատես է, հոռետես և նույնիսկ մարդատյաց: Բայց երբ հասկանում, խորանում ես պոեմի գաղափարի մեջ, ապա հասկանում ես, որ նա ընդվզում է, սլաքն ուղղում բուրժուական հասարակարգի դեմ, որը խեղաթյուրում , այլանդակում է մարդուն, սնունդ տալիս այն ամենին, ինչ հակամարդկային է, գազանաբարո: Սիրերգակ բանաստեղծը մի բանաստեղծության մեջ ցավով գոչում է.

Ավա՜ղ, լուսնի տակ և վեհ բան չըկա,

Ամեն ինչ կոպիտ, բիրտ անասնական.

Աննյութ, անմարմին, անկիրք սեր չըկա,

Ա՜խ, մաքուր սերը երազ է միայն:

Եվ պոեմում շարունակում՝

Ո՜վ սեր, բնության դու խոշտանգիչ կամք, նենգ ու դավադիր ոգի աննահանջ,

Դու թոհուբոհի ընդերք մոլեգնած, արյուն ցավատանջ, արյան մղձավանջ:

Ապա ներկայացնում այն հարցերը, որոնց շուրջ մյուս խմբերը պիտի մտածեն ընթացքում

1.Ո՞ր պատկերը ինչպե՞ս է կերպավորում մարդկային ապրումը / քնարական հերոսի լուսավոր թախիծը և ցասկոտ խռովքի հոգեբանությունը/:

2.Ո՞րն է հեղինակի գեղագիտական իդեալը և պոեմում ի՞նչ ձևերով է դրսևորվում այն:

3. Բացատրել արևի մետաֆորը[3] «Աբու- Լալա Մահարի» պոեմում

2.3 Գրական նյութը լուսաբանող Խումբ ----------

Գրքի վերնագիրը – «Աբու- Լալա Մահարի » ***պոեմը*** **Առաջադրանք էջ -մինչև գլուխ**

Ձեր հանձնարարությունն է գտնել պոեմում մի քանի յուրօրինակ կամ հետաքրքիր հատվածներ, որոնք խումբը կցանկանար լսել բարձրաձայն ընթերցմամբ: Դուք պետք է օգնեք, որ ձեր խումբը հիշի տվյալ վեպի հետաքրքիր, բնորոշ, ուժեղ, առեղծվածային կամ կարևոր հատվածներ: Դուք ընտրելու եք այն հատվածները, որոնք ուշադրության արժանի կհամարեք: Յուրաքանչյուր հատվածի ընտրության վերաբերյալ ձեր նկատառումները գրի առեք այստեղ:

Պոեմի հերոսը 10-11-րդ դարերի արաբ բանաստեղծ Աբու ալ Ալա ալ-Մահարին է, որը քիչ նմանություն ունի Ավետիք Իսահակյանի ներդաշնակած կերպարին: Արաբ բանաստեղծը մանուկ հասակում ծաղկախտ հիվանդությունից զրկվել է արևի լույսից և իր ամբողջ կյանքը գրեթե անց է կացրել Սիրիայում, Բաղդադում նա ապրել է մի քանի ամիս: Միջնադարի և 20-րդ բանաստեղծների տրամադրությունները եզրեր ունեն: Դրա վկայությունը Իսահակյանի թարգմանած այս բանաստեղծությունն է.

---

[3] *Գեղարվեստական փոխաբերության* բնօրինակ համեմատություն է, որը ուշադրություն է դարձնում որպես <u>խոսքի գործիչ</u> : Նաև հայտնի է որպես *բանաստեղծական փոխաբերություն, գրական մետաֆորիա, վեպի մետաֆորիա* եւ *ոչ ավանդական փոխաբերություն*

Ես տեսնում եմ՝ մարդկանց տարված կռիվներով, վեճերով,

Աղանդավոր, մոլեկրոն, ապուշ ամեն կողմերով:

Թագավորներ, որ խորհում են միայն ուտել, շվայտել,

Նախարարներ, որ հոգում են հարկ ու տուգանք սոսկ կապտել:

Որոնց անհոգ ցանկությունն է՝ հպատակի տները

Ավար առնել, ավեր անել, բռնաբարել կիները:

Կա նվիրված արդյոք մի վայր իրավունքին երկրիս մեջ,

Այս խավարում ման գամ, գտնեմ `ձեռքիս լապտեր մի անշեղ:

Արաբ բանաստեղծի այս տրամադրության արդյունքն է նրա շիրմաքարին փորված «**Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ»** խոսքերը, որը կարդում ենք նաև պոեմում: Ընտրելով արաբ բանաստեղծին որպես իր ստեղծագործության հերոս՝ Իսահակյանը բնավ նպատակ չի ունեցել կենսագրական պոեմ գրել: Այս գործի գաղափարը և նպատակը ավելի քան հասարակական երևույթներից բխող անձնական մտորումներն են, նրա սեփական կենսափորձը կյանքի մասին:Այս պոեմը բանաստեղծի հոգու ընդերքից ժայթքող մի ահռելի ողբերգական մենախոսություն է, բողոք, ընդվզում, էության աղաղակ համայն աշխարհակարգի, հասարակական նախապաշարումների, կեղծ ու պատիր բարոյական չափանիշների, օրենքի ուժով պարտադրված բռնության դեմ:

Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել եմ մարդկային հոգում,

Մարդկային հոգում՝ զազիր ու նանիր՝ համրել եմ հազար գարշանք ու նողկում:

Բայց ամենից շատ ատում եմ հազար ու մեկերորդը – կեղծիքը հոգու,

Որ զարդարում է անմեղ սրբերի լուսապսակով երեսը մարդու:

Մարդկային լեզու, դու որ երկնային բույրով ու թույրով, շղարշով պայծառ

Ծածկում ես մարդու դժոխքը հոգու, ոգե՞լ ես արդյոք ճշմարիտ մի բառ:

Թվում է ճշմարիտ կարող է օրենքը լինել, որի առաջ բոլորը պետք է հավասար և պատասխանատու լինեն: Սակայն՝

Ի՞նչ է օրենքը, – մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների այդ սուրը դաժան,

Անզորի գլխին կախված հավիտյան, խեղճին խողխողող, հզորին պաշտպան:

Ոգիս ազատ է, ես չեմ հանդուրժում իմ վրա իշխող ոչ մի զորության,

Ոչ օրենք, սահման, ոչ ճակատագիր, ոչ չար ու բարի և ոչ դատաստան:

Իմ գլխի վերև չպետք է լինի ոչ մի հովանի, ոչ մի իրավունք,

Եվ իմ կամքից դուրս ամեն ինչ բանտ է, և՛ ստրկացում, և՛ բռնադատում:

Ես կուզեմ լինել անսահման ազատ, անպարտք, անիշխան, այլև անաստված,

Հոգիս տենչում է միայն, միմիայն՝ մեծ ազատության՝ անհուն, անտարած: –

Եվ սիրո սքանչելի երգիչը, որ գիտեր իր քնարով աստվածացնել կնոջը և ճշմարիտ տառապանք ապրել սիրո տխուր վերջաբանից, որ կարող էր անհուն խանդաղատանքով երգել «Հավերժական սերը» էլ – Սամանի և հավաստել թե՛ ամեն բան կարող է վերանալ, ապարանքներ կործանվել, պուրակներ չորանալ, խարխլված սյունից սյուն սարդոստյան հյուսվել և անապատի դեղին քղանցքը փռվի և ծածկի ապարանքը՝սերը մնում է «հաղթապանծ… անանց, հավերժող, հզոր, անմահ, մահից հետո էլ… ոչ թե սիրո, որովհետև սերն անմահ է, այլ սիրո տեր մարմնի մահից հետո…»:

Պոեմում կինն արժանանում է ամենադաժան արհամարհանքի: Կնոջ խոսքերի, ժպիտի, պահվածքի ու վարքագծի մեջ հերոսը տեսնում է միայն կեղծիք, խաբեություն, դավաճանություն՝ հատկանիշներ, որոնք մարդու մեջ մեռցնում են հավատը կնոջ և սիրո նկատմամբ:

Եվ կինն ի՞նչ է որ… խորամանկ, խաբող, առնախանձ մի սարդ, հավերժ նանրամիտ,

Որ հացդ է սիրում, համբույրի մեջ սուտ և քո գրկի մեջ գրկում ուրիշին:

Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին,

Նա կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խոսում:

Բանաստեղծը եզրակացնում է, որ գերադասելի է խարխուլ մակույկով ծովին հանձնվելը, քան կնոջ երդումին հավատալը: Ժխտման մոլուցքը հասնում է այնպիսի չափերի, որ հերոս-բանաստեղծը դատապարտում է անգամ կնոջ որդեծնության հատկանիշը, որը հավերժ նորոգում է աշխարհը: Եվ սրա հիմքը Աբու-Լալա Մահարի բանաստեղծի շիրմաքարի վրա քանդակված խոսքերն են.

Սրիկա է նա, ով հայր է լինում, ով երանավետ ծոցից ոչնչի՝

Գոյության կոչում թշվառ հյուլեին և գլխին վառում գեհենն այս կյանքի:

– Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն՝ չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ,

– Այս իմ կտակը թող գրվի շիրմիս, եթե լուսնի տակ մի խորշ պիտ գտնեմ:

Ազգային, համամարդկային, անձնական վշտերի պղտոր հեղեղների հորդումը դառնում է անսանձելի… Բանաստեղծն ապրել էր Հայոց առաջին համիդյան կոտորածների սարսափը և 1909 թվականին երիտթուրքերի՝ Ադանայում կազմակերպած ջարդերի ահռելի վիշտը: Բանաստեղծն ապրում էր ցարական իշխանությունների բռնարարքների պատճառով բանտերը նետված «լուսավոր լավերի» և իր սեփական ազատազրկումի ցավը:

Կուտակվում են սպառնալից մրրիկներ, մոլեգին պտույտի մեջ առնում երկրային կեցության հիմներն ու ծածկերը, իրար խառնելով, տակնուվրա անելով ամեն ինր: Ոչինչ չի մնում տեղում, մարդ, պետություն, օրենք, իրավունք, անգամ հայրենիքը, մրրկապարի մեջ են ներքաշվում բոլոր երևույթներն ու հասկացությունները:Չթաքցնելով խռովքն ու դառնությունը մարդու, հասարակության կառուցվածքի հանդեպ պոեմի հերոսը՝ անտուն ու մենակ, այդ մրրկապարի միջից հայացքը լարած դարձյալ հետևում է նույն մարդուն, մարդկային հարաբերություններին, մարդկության ճակատագրին: Բանաստեղծի և՛ երջանկությունը, և՛ ողբերգությունը հորդում է նույն ամբողջական հիմքից՝ կյանքից: Պտտահողմի մեջ ընկած Մահարին և՛ մռայլվում է, և՛ սքանչանում, նզովում և օրհնում միաժամանակ:

Ապիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է գողին՝ ազնիվ բարեհույս,

Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տգեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կույս:

Մարդկային աշխարհ, արյան բաղանիք, ուր թույլն՝ հանցավոր և հզորն՝ արդար,

Ուր մարդը տխեղծ՝ ինչ-որ անում է այս գարշ աշխարհում՝ սոսկ նյութի համար:

Խեղվել է մարդկայինը, աստծո պատկերի տակ թաքնված են սատանայի վիժվածքներ, ոսկին մամլել, հավասարեցրել է տխմարին ու հանճարին, «արյան բաղնիքում» աղճատվել ու խեղվել են մարդկային մարմինն ու կերպարանքը: Մահարին ընդվզում է նյութական տարերքի այս ամենակուլ իշխանության դեմ և խարազանում որպես հակաբնական երևույթ: Նա ներդաշնակության եզրեր չի գտնում մարդկային բնական կերտվածքի, նրա բնատուր էության և կյանքի սոցիալական հաստատության ձևերի միջև և շշուկով ու երկյուղածությամբ չի խոստովանում դա, այլ բարձրաձայն գոչում է աշխարհով մեկ:

Թանձրացող խռովքը անսպասելիորեն զուգորդվում է ոգեշնչման հետ, ունայնացնող հողմին ուղեկցում են անհունի բյուր նվագները: Կենսականության նման անհաղթահարելի տարուբերումները պոեմը հանգեցնում են խոր դրամատիզմով:

Մանկությունն է իմ սերը հիմա, երկինքն աստղաբիբ – վրանս հայրական,

Եվ քարավանն է ընկերս հիմա, և իմ հանգիստը՝ ուղիս անկայան:

Եվ միակ մղիչ ուժը, որ տանում էր առաջ Աբու Մահարուն, ազատության ծարավն էր, բաղձանքը հասնելու մի հանգրվանի, ուր ինքը զգար իրեն ազատ ու ինքնիշխան, չենթարկվող ոչ ոքի՝ «Իմ գլխի վերև չպետք է լինի ո՞չ մի հովանի»: Քարավանը բերեց-հասցրեց Աբու-Լալային «Արաբստանի մեծ անապատի դարպասների մոտ». այս կանգառը պոեմի նախավերջին՝ յոթերորդ սուրահն է, ուր, հիրավի, բոլորից առավել բացահայտվում է հերոսի փիլիսոփայության հիմքը, քանզի այստեղ նա, կարծես, ի մի է բերում իր մտքերի փոթորկահույզ օվկիանոսը և պատրաստվում վերջին սլացքին դեպի արևը...Եվ այսպես, նա ծունկի է իջնում ու խորհում.

Ո՜հ, ի՜նչ ազատ եմ, անպարփակ ազատ. մի՞թե կարող է այս մեծ Սահարան

Պարուրել, գրկել իր ծիրերի մեջ ազատությունը՝ անհուն, անսահման:

Նա հասկանում է, որ այս ազատությունն էլ պայմանական է: Նա գտնում է, որ ձեռք բերած ազատությունը սոսկ իր համար է, իսկ դա դեռ շատ քիչ է, և ահա ինչ է նա աղերսում իր կուռք ազատությունից.

Ո՜վ ազատություն, դու դրախտային չքնաղ վարդերի լուսեղեն բուրմունք:

Քո պերճ վարդերով դո՜ւ պսակիր ինձ, վառի՜ր իմ հոգում ջահերդ հուր-հրան.

Արևն ստանում է փիլիսոփայական-երևակայական, ուտոպիական երազանքի մարմնավորում, ինչին ձգտել է Աբու Մահարու հոգին առաջին սուրահից մինչև վերջինը: Արևն է իր մեջ կաղապարում երջանկության ու արդարության կիզակետը: Խորհրդանիշը այն իդեալական պատկերացումների, որ փափագեց իր հոգում Աբու Մահարին: Արևը մարդու կյանքի հավիտյան կենարար աղբյուրն է: Արևը մարմնացումն է նոր, լուսավոր կյանքի համար մարդու տածած հույսի: Արևը Իսահակյանի պոեմում ազատության հոմանիշն է: Եթե Աբու Մահարին ուզում էր, երազում էր ազատության տիրակալություն հաստատել երկրի վրա, ապա արևի խորհուրդը կրում է անիրականանալիի իրականացման գաղափարը: Եվ Աբու Մահարու արևապաշտությունը ազատաբաղձության մի նոր, ավելի բարձր աստիճան է: Նրա հոգին կարոտ է ազատություն ստանալու և ազատություն տարածելու՝ արևի միջոցով իր «արևի քաղաքը» կառուցելու

Սալա՜մ քեզ, արև՜, շյուքըր բյուրաբյուր, դու աստծուց հզոր, դու կյանքի աղբյուր,

Դու, իմ անմահ մայր, մայրական դու գիրկ, դու միակ բարի, դու միակ սուրբ, սուրբ:

https://1drv.ms/p/s!AmxK-UMRoJH1iWRrdpOjvatUpd_S?e=qDMwgK

2.4 Բառապաշարը հարստացնող խումբ Խումբ ----------

Գրքի վերնագիրը - «Աբու-Լալա Մահարի» պոեմ Առաջադրանք էջ --մինչև ----գլուխ

Դուք պետք է օգնեք խմբի անդամներին, որ նրանք ընթերցանությամբ հարստացնեն իրենց բառապաշարը: Ձեր առաջադրանքն է գտնել կարևոր, նոր կամ հետաքրքիր բառեր ընթերցած ստեղծագործությունում: Դուրս գրեք այն բառերը, որոնք նոր են, անհասկանալի կամ օգտագործվում են նեղ իմաստով :

«Աբու-Լալա Մահարի» պոեմում Իսահակյանը օգտագործել է պատկերավոր արտահայտչամիջոցներ՝ մակդիրներ, համեմատություններ, փոխաբերություններ, չափազանցություններ, հնչյունային և բառային կրկնակներ, հակադրման և շրջադասման դեպքեր, ճարտասանական ձևեր: Պոեմի որոշ սուրահներում նման պատկերները ստեղծվում են բնության ու Մահարու տրամադրության հակադրման, իսկ որոշ սուրահներում էլ զուգադրման միջոցով: Այդ հնարանքների շնորհիվ բանաստեղծական խոսքը պոեմում դառնում է վերին աստիճանի պատկերավոր ու արտահայտիչ:

Մակդիր-մեղկ փափկություն, գոհար աստղեր, անուշ մրմունջ, չքնաղ դժոխք, ոսկեշող երազ, լուսեղեն բուրմունք, վսեմ արև, լույս գիրկ, հուր ալիքները, ոսկեփրփուր ծիրանի:

Համեմատություն-Եվ քարավանը Աբու Լալայի աղբյուրի նման մեղմ կարկաչելով..., և լուսինն իբրև ջեննեթի մատաղ փերիի կուրծքը..., իրենց աղեղի պարանոցները՝ ուղտերը լարած..., և ուղտերն իբրև ոսկե մակույկներ..., և անապատի դեղին շեղջերը հորձանքներ կտան ալիքների պես..., ատում եմ սերը՝ մահի պես անգութ..., գիշերն ահարկու՝ և սև, և հսկա մի չղջիկի պես թևերը փռեց..., հողմերն անհեթեթ ջիններ նման..., նա հրեշի պես կրծքիս է նստել..., և լալիս էր նա առանց արցունքի, և նրա վիշտը նման անհունի..., և անապատի դեղին շեղջերը հորձանքներ կտան ալիքների պես:

Փոխաբերություն- Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ ղողանջով..., շատրվանները քրքջում էին պայծառ ծիծաղով ադամանդեղեն..., գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով..., արմավն ու նոճին անուշ քնի մեջ օրորվում էին ճամփեքի վրա..., անուշ մրմունջով, նիրհած դաշտերով մեղմ օրորվում էր ձիգ քարավանը..., փոշի էր հանում, – փոշու քարավան, որ վարում էր լուռ՝ խորշակն հուր շնչով..., դեպի երազուն և կապույտ հեռուն հոսում էր առաջ հանգիստ ու անդորր:

Հնչյունային և բառային կրկնակներ- Հարբեցրու ինձ, հարբեցրու ինձ, քո անմահ գինով հարբեցրու ինձ, Դու միակ բարի, դու միակ իմ սեր, դու միայն սուրբ, սուրբ, մայրական դու գիրկ,

Նույնասկիզբ- **Ատում** եմ սերը՝ մահու պես անգութ,

Ատում եմ կնոջ՝ տարերքը կրքի,

Ատում եմ նորից սերն ու կնոջը,

Շրջադասություն - Եվ քարավանը մեղմիկ կարկաչով չափում էր **ուղին ոլոր ու մոլոր**…, Աշխարհն էլ, ասես, մի **հեքիաթ** լինի՝ **անսկիզբ, անվերջ, հրաշք դյութական**…, ձեր **գործերը չար**…, **երազն այս չքնաղ, հեքիաթն այս ոսկյա:**

Հարանունություն- ոլոր ու մոլոր, օրոր ու շորոր, զազիր ու նանիր:

Շատ հարուստ և ճոխ է պոեմի բառապաշարը, և ստեղծել ենք մի հրաշալի բառարան:

	«Աբու-Լալա Մահարի» պոեմի բացատրական և հոմանիշների բառարան	
1	Աբու-Լալա Մահարի	110-րդ դարի արաբ բանաստեղծ
2	Ալ-Կորան կամ Ղորան	մահմեդականների սուրբ գիրք
3	ամբարտավան	գոռոզամիտ
4	ամեհի	անզուսպ, կատաղի
5	անծիր	այստեղ՝ լայն, անպարփակ
6	աննկուն	անպարտելի, դիմացկուն, առանց ընկճվելու
7	անքթիթ	փխբ. Անայլայլ
8	ապարոշ	գլխի փաթույթը
9	ապիկար	անկարող, ապաշնորհ, անընդունակ
10	ապիրատ	անիրավ, չար, անողոք
11	առապար	քարքարոտ տեղ
12	աստղաբիբ	աստղալից
13	արբշիռ	արբեցումի, կերուխումի անձնատուր, զեխ, շվայտ
14	բադիե	անապատ
15	բալասան	դեղ, սպեղանի
16	բարկ	թեժ, կիզիչ
17	բեդվին	անապատաբնակ, քոչվոր արաբ
18	բյուրեղ զանգեր	այստեղ՝մաքուր, զուլալ ձայն ունեցող զանգեր

19	գազել	արևելյան քնարերգության մեջ երկտող տներով ոտանավոր, որի ամեն զույգ տողի վերջում հանգավորումը կրկնվում է
20	գեհեն	Մահմեդական կրոնում՝ դժոխք, այստեղփխբ.՝ ծանր, տանջալից վիճակ
21	գյուլստան	պարսկերեն՝ ծաղկաստան, պարտեզ
22	գուլ	բթամիտ
23	դժնի	դաժան, այստեղ՝ ահռելի, սոսկալի
24	դույզն-ինչ	փոքր-ինչ
25	դրուժան	ուխտադրուժ, դավաճան
26	եղկելի	թշվառ, ողորմելի, նողկալի
27	երկսայրի	երկու կողմ ունեցող
28	զազիր	ստոր, անարգ
29	զիլ	այստեղ՝ լարված, ձգված
30	թույր	գույն, երանգ
31	ժահր	թույն, լեղի, այստեղ փխբ.՝ մոլությամբ
32	ժանտ	դաժան, ոճրապարտ
33	Իբլիս	դև, սատանա
34	լլկել	դաժան չարչարանքների ենթարկել
35	խալիֆ	արաբական իշխանությունում տիրակալ, որը գլխավորում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունները
36	խարազան	կաշեփոկերից հյուսած հաստ մտրակ, այստեղ փխբ.՝ պատիժ, պատիժ գործադրող
37	խոլոր	խոժոռ, կատաղի
38	խողխողել	մահացու խոցել, խոցոտել, խոցոտելով սպանել
39	խորշակ	տաք քամի
40	ծոթոր, ծոթորին	թփաբույս, որ օգտագործվում է բժշկության, խոհարարության և օծանելիքի արտադրության մեջ, կորթին

41	կաթոգին	շատ սիրով, կարոտագին, գուրգուրանքով
42	կայրակել	փխբ. հնչել, ղողանջել
43	կառափ	գանգ, գլուխ
44	կավատ	վատ գործարքի միջնորդ
45	կիզել	այրել
46	կլա	ամրոց, բերդ
47	հակինթյա	հակինթից կապույտ կամ կանաչ գույնի թանկագին քարից
48	համայնք	մարդկանց հասարակական միավորման ձև
49	հանգրավան	հանգստանալու տեղ
50	Հեջազ	Արաբական թերակղզու խոշորագույն աշխարհագրական շրջան և պետություն, այժմ՝ Սաուդյան Արաբիա
51	հեստոտ	անզուսպ, կատաղի, հեստ
52	հյուլե	նվազագույն մասնիկ, տարր
53	հոլանի	մերկ, բաց
54	հողի թուխպ	օդի մեջ տարածված փոշու ամպ
55	հրակոծ	այրող, տոչորող
56	մահիճ	անկողին
57	մեղանչել	մեղք, ծանր հանցանք գործել
58	մեղկ	ցոփ, շվայտ
59	մղձավանջ	ծանր, տանջալից երազ, փխբ. ահռելի, անտանելի վիճակ
60	մուճակ	ոտնամանի տեսակ
61	նախճիր	կոտորած, արյունահեղություն
62	նանրամիտ	դատարկամիտ
63	նարճիս	ծաղկի տեսակ, նարգիզ, նարգես
64	նենգ	չար, խարդախ բնավորություն ունեցող
65	ներբան	ոտքի տակի մասը

66	նյութել	ծածուկ որևէ բան, դավադրություն սարքել, վիրավորանք հասցնել
67	շափյուղա	շափյուղայի գույնի, կապույտ, կապուտակ
68	շաքրի	արևելյան ժողովրդական տխուր մեղեդիների մի տեսակ
69	շեղջ	կույտ, դեզ, կուտակ
70	շեմս	պարսկերեն՝ արև
71	շյուքը	փառք, գոհություն
72	ոգել	արտասանել
73	ոստան	մեծ ու շքեղ քաղաք, այստեղ՝ սպանության, դաժանության վայրեր
74	որոմ	մոլախոտի տեսակ, փխբ. հասարակության համար վնասակար մարդ
75	ունայնաշունչ	իզուր, աննպատակ փչող
76	պատրանք	անիրական երազանք
77	պարուսան	ուղտի սանձափոկ
78	պերճ	շքեղ, փարթամ, ճոխ
79	պիղծ	փխբ. չարություն, աղետ ծնող, չարիք պատճառող
80	ջեհնեմ	դժոխք
81	ջեննաթ, ջեննեթ	մահմեդական կրոնում՝ դրախտ
82	ջին	բարի և չար ոգիների անվանումը պարսկական և արաբական դիցաբանության մեջ
83	սալամ	ողջույն
84	Սահարա	անապատ Աֆրիկայում
85	սամում	տաք, ավազախառն ուժեղ քամի
86	սերաբ	տեսողական պատրանք, զգայախաբություն, միրաժ
87	Սինա	թերակղզի Եգիպտոսի հյուսիսարևելյան մասում, բարձունք նույն թերակղզում
88	սնար	այստեղ՝ լեռան կատար
89	սնդուս	ողորկ ու փայլուն երեսով գործվածք, փխբ.

		շողշողուն
90	սուրալ	սլանալ, արշավել
91	սուրահ	գրական ստեղծագործության գլուխ, հատված, մաս
92	վաշխառու	կեղեքիչ, շահագործող
93	վարար	այստեղ՝ ցանկասեր
94	վիժվածք	փխբ. անարգ, ստոր արարած
95	վուհադի	հովիտ, օազիս
96	վտառ	խումբ
97	տատասկ	փշոտ տերևներով խոտաբույս
98	տարփանք	մարմնական ուժեղ ցանկություն
99	տարփողել	ի լուր ամենքի հայտարարել
100	տիտանյան	հսկայական, վիթխարի
101	տխեղծ	վատ, այլանդակ
102	քասիբ	ներբող, գովերգ, ձոներգ
103	քինոտ	քեն, ոխ պահող
104	քղանցք	զգեստի ներքևի եզրը, փեշը
105	քյոշք, քյոշկ	ապարանք, պալատ
106	օազիս	անապատի մեջ կանաչապատ տեղ, որտեղ ջուր կա,փխբ. անբարեհաջող հանգամանքներում՝ նպաստավոր

https://learningapps.org/watch?v=pd92a51h322- հոմանիշներ1

https://learningapps.org/watch?v=pex7tq6a522 – հոմանիշներ2

https://learningapps.org/watch?v=pgebqpc2k22 - պոեմի պատկերավոր արտահայտչամիջոցները
https://docs.google.com/presentation/d/1eO10vH6-aYSBnK_jGeLA_gqD7uM8q19P/edit?usp=sharing&ouid=100557854254349955198&rtpof=true&sd=true Սահկահանդես

2.5 Կապակցող խումբ **Խումբ ----------**

Գրքի վերնագիրը – «Աբու-Լալա Մահարի» պոեմ Առաջադրանք էջ -մինչև --գլուխ

Ձեր առաջադրանքն է կապեր գտնել այս պոեմի և այլ ստեղծագործությունների միջև, այս պոեմի և իրական աշխարհի միջև: Դա նշանակում է ընթերցած նյութը շաղկապել ձեր անձնական կյանքի հետ: Եթե ուղղակի կապ չեք գտնում, փորձեք պոեմի մեջ գտնել որևէ կարևոր օրինակ կամ նկար:

Կապակցում ենք տարբեր ստեղծագործությունների հետ՝ Նարեկացու «Մատյան ողբերգության», Չարենցի «Ամբոխները խելագարված», Իսահակյանի «Սասմա Միեր», Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմների հետ: Ներկայացնենք մեկ օրինակ՝

Անգլիացի հռչակավոր բանաստեղծի՝ **Ջորջ Գորդոն Բայրոնի** պոեզիայի զարդ է համարվում **«Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը »** պոեմը: Այն այնքան մեծ ընդունելության է արժանանում, որ հեղինակն այդ առիթով ասում է «Ես արթնացա մի առավոտ և ինձ գտա հռչակավոր»:

Այս ստեղծագործությունը նոր ժամանակների առաջին քնարապատմողական պոեմն է: Սրա հիմքում ընկած է բանաստեղծի արհամարհանքը մարդկային ստրկամտության հանդեպ: Բայրոնի արհամարհանքը ոչ թե մարդուն նվաստացնելու միտումներ ունի, այլ մարդուն մղում է ինքնահարգանքի: Նրա հերոսները հպարտ են, մենավոր, աստանդական, ինչպես ինքը՝ Բայրոնը: Նրանք ընդվզում են դարի կաշկանդումների ու տառապանքների դեմ, խարազանում էին ժամանակակից հասարակությունը, ուժգնորեն բախվում էին մարդու և բնության ստեղծած անարդարությունների և տապալվում իրենց իդեալների ու երազանքների փլատակների վրա:

Այնպես, ինչպես «Աբու-Լալա Մահարի» պոեմում, այնպես էլ այս պոեմի գլխավոր հերոսի միջոցով բանաստեղծը գծագրում է ժամանակի իրականության, հասարակական կառուցվածքի, մարդկային հարաբերությունների պատկերը՝իր բոլոր արատներով, բոլոր հակաբարոյական երևույթներով:

Պոեմների գլխավոր հերոսները՝ Չայլդ Հարոլդը և Աբու-Լալա Մահարին մեկուսացվել են հասարակությունից: Այս ստեղծագործություններում անմիջապես աչքի են ընկնում հրաժեշտի երգերը: Նրանք հրաժեշտ են տալիս հայրենիքին, ծնողներին, կնոջը, բարեկամներին: Չայլդ Հարոլդը դիմում է իր նավակին՝խնդրելով՝

Տա՜ր ինձ, նավա՛կ, քեզ հետ հոգ չէ,

Թե բախտն ինձ ուր կտանի,

Տա՜ր ուր կուզես, միայն թե ես

Չտեսնեմ հողն հայրենի:

Իսկ Աբու-Լալա Մահարին խնդրում է իր քարավանին.

-Գնա՜, միշտ գնա՜, իմ քարավանս, և քայլի՜ր մինչև օրերիս վերջը,-

Այսպես էր խոսում իր սրտի խորքում Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:

Նրանց կարծիքով մարդկանց աշխարհում պղծված են բոլոր սրբությունները: Ինչո՞ւ են նրանք հեռանում մարդկանցից, հայրենիքից. Նրանք մարդկանց մեջ չեն տեսնում հաշտություն, հոգածություն: Մարդը և հասարակությունը հերոսների աչքերում ոչ թե հակադրված են, այլև թշնամի են միմյանց: Այդ թշնամանքի արտահայտման ձևերից մեկը նրանք համարում են մարդկանց միջև եղած հարաբերությունների կեղծությունը: Պետք է փախչել ընկերությունից, բարեկամներից, պատվից ու փառքից, քանի որ այդ ամենը անիմաստ է՝ կեղծիքի ու բռնության վրա հիմնված: Նրանք ատում են իշխանությունը, որն անպաշտպան մարդկանց գլխին կախված հավիտյան սուր է:

Անցած դարերի, գալիք դարերի մեծ դահիճն է նա և մեծն ավազակ,

Իր անցած ուղին՝ ոճիր ու նախճիր՝ սարսափներ վիժող, ոխակալ ոհմակ:

Հարոլդը և Մահարին համոզված են, որ իրենք հեռանում են տնից, և հեռացումը ցավ չի պատճառելու մեկին: Մարդկանց միջև ջերմ կապեր չկան, ու եթե չեն ցավելու իրենց համար, իրենք ինչու պիտի ցավեն ուրիշների համար: Հրաժեշտի երգերի մեջ իշխում է թախիծն ու հպարտությունը, անձնապաշտությունը: Նրանց թախիծը համատարած է, և նրանք հակադրվում են ոչ միայն մարդկանց, այլև կյանքի գաղափարներին: Այդ պատճառով մարդկային կյանքը հերոսների համար ողբերգական պատկեր է:

Բայրոնը գրում է, թե ինչպես ինքն ընկած փրփուր երախը ծովի, ինչպես ժայռից պոկված ճյուղ, ծգտում է դեպի անհայտ հեռուները կրկին և հյուսում տխուր

մի պատմություն… Իսկ Աբու-Լալա Մահարին փորձում է պատմությունը հյուսել անապատի տաք ավազների մեջ: Եվ այդպես հերոսները փնտրում էին անվհատ երկնքի տակ նոր միտք, նոր հավատ:

«Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի մեջ Հարոլդի կերպարը, իսկ «Աբու-Լալա Մահարի» պոեմում Աբու-Լալա Մահարու կերպարը ներկայացնում են արիստոկրատական մոլորություններ, անհատապաշտություն: Նրանց հակադրված է պոետի կերպարը, որը հանդես են գալիս որպես ազատության, հավասարության, եղբայրության քարոզիչ պատմական նոր իրադրությունների մեջ:

2.6 Ամփոփող խումբ ----------

Գրքի վերնագիրը –«Աբու-Լալա Մահարի» պոեմ Առաջադրանք ----------
Ձեր հանձնարարությունն է կազմել այսօրվա ընթերցած նյութի համառոտագրությունը: Դա պետք է լինի հիմնական գաղափարների, հիմնական մտքերի սեղմ շարադրանքը: Երկու- երեք րոպեի ընթացքում հաղորդեք խմբին ընթերցած պոեմի բովանդակությունը:

«Երբեմն կարող է թվալ, թե «Աբու-Լալա Մահարին» Իսահակյանի ամենա ոչ հայկական, ոչ ազգային պոեմն է: Քանզի այստեղ ո՞չ թեման, ո՞չ նյութն են հայկական և ո՞չ էլ զուտ հայկական խնդիրներ են արծարծվում. դրանք դուրս են գալիս ազգային գաղափարախոսության ոլորտից, և առնչվում են համամարդկային պրոբլեմներին:
Այս և նման տեսակետներին բոլորից լավ պատասխանում է ինքը՝ Իսահակյանը, Հովհաննես Ավագյանին 1926 թ. հունվարի 31-ին գրած նամակում, ուր ի մի բերելով իր արածը, նա ասում է. «Հաջողված եմ թե ոչ, չգիտեմ. ճշմարտությունն այն է, որ ես դժբախտաբար շա՛տ տառապած մարդ եմ... բանտեր նստած, աքսորված, վտարանդի, միշտ անապահով վիճակ, ունեցել եմ շա՛տ թանկագին մարդկային կորուստներ, և վերջապես հայության աղետը, որ մոռցնել է տալիս անհատական վիշտ ու ցավ: Եվ «Մահարին» նրանց արդյունքն է:
Պետք չէ, որ կոտորածները երգեմ, ցույց տալու համար իմ վիշտը (Սիամանթոյից հետո դժվար է երգել), սակայն «Աբու Լալայիս» ռուս և գերման թարգմանությունների մասին գրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել: Անբացատրելի, զարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթագնել

մի հոգի, հայ մարդու հոգին...»:[4]

Այսպիսով՝ հանգում ենք այն հետևությանը, որ Ավետիք Իսահակյանը թեև խիզախորեն ընդվզում է բուրժուական հասակարգի դեմ, բազմակողմանի բացահայտում ու խիստ քննադատում է նրա արատները, անբուժելի խոցերը, բայց չի գտնում մարդկության ազատագրման ճիշտ ուղին:

Պոեմի ստեղծման ժամանակը- 1909թվական

Պոեմի ստեղծման ժամանակաշրջանը-ստոլոպինյան սև ռեակցիայի տարիներ

Ակունքները-«Իմ քարավանը», «Օտար, ամայի ճամփեքի վրա»

Պոեմի ստեղծման առիթը- Աբու Ալա Ալ Մահարու ստեղծագործությունը:

Պոեմի հենքը- Ես տեսնում եմ՝ մարդկանց տարված կռիվներով, վեճերով...

Պոեմի տեսակը- ռոմանտիկական, քնարական

Պոեմի կառուցվածքը-նախերգանք, սուրահներ, վերջերգ

Հիմնական գաղափարը- կենսասիրությունը, մարդասիրությունը

Գեղարվեստական առանձնահատկությունը- հարուստ պատկերավոր-արտահայտչամիջոցներով

Բանաստեղծական չափը- 20 վանկանի տողեր՝ քարավանի քայլքին համապատասխան

Ի՞նչ տեսա	**Ի՞նչ ձայներ լսեցի**
Քարավան, գիշեր, արմավ, նոճի, ծաղկունք	հնչուն զանգերի անուշ ղողանջ, գազելների երգ, հովի շշնջոց, շատրվանների քրքջոց, զանգակների հեկեկոց, զեփյուռների սրինգների մեղմ գեղգեղանք, նժույգների դոփյուն, մարդկային ձայներ

[4] Ավիկ Իսահակյան «Աբու-Լալա Մահարի պոեմի հերոսը և հեղինակը» էջ159

Ի՞նչ հասկացա **Կյանքը** երազ է, աշխարհը՝ հեքիաթ, ազգեր, սերունդներ – անցնող քարավան **Եղկելի** մարդիկ, փոշի կըդառնան ձեր վատ սրտերը, ձեր գործերը չար: **Դու** միակ բարի, դու միակ իմ սեր, դու միայն սուրբ, սուրբ, մայրական դու գիրկ, Դու հավետ գթոտ, մահը խորտակող, դու գերահրաշ միակ գեղեցիկ:	Լոգո

Գնահատման սանդղակ – ՌՈՒԲՐԻԿ

Չափորոշիչ / Գնահատական	Աշխատանք խմբային նպատակների համար	Միջանձնային կարողությունների դրսևորում	Հաղորդակցության ձևերի բազմազանություն
9-10	Աշխատանքը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին: Երևակայություն և ստեղծագործական մոտեցում է դրսևորված: Խոսքը ունի հարուստ բառապաշար: Կարողացել են գրական ստեղծագործությունը վերլուծել, գրական կերպարը բնութագրել Նրա մասին վերլուծական բանավոր և գրավոր խոսք կազմել, իմանալ և խորացնել գիտելիքները,	Խթանում է փոխազդեցությանը խմբում, ուշադիր է մյուսների հանդեպ	Ստեղծագործաբար կիրառում է բազմաթիվ ձևեր

7-8	Աշխատանքը համապատասխանում է առաջադրված պահանջներին: Ստեղծագործական մոտեցում է դրսևորված: Խոսքը ունի հարուստ բառապաշար: Կարողացել են գրական ստեղծագործությունը վերլուծել, գրական կերպարները բնութագրել Նրանց մասին վերլուծական բանավոր և գրավոր խոսք կազմել, իմանալ և խորացնել գիտելիքները	Մասնակցում է խմբային փոխազդեցություններին, ուշադիր է մյուսների հանդեպ	Կիրառում է բազմաթիվ ձևեր բայց ոչ ստեղծագործաբար
4-6	Աշխատանքը որոշ չափով բավարարում է առաջադրված պահանջներին: Ստեղծագործական մոտեցում դրսևորված չէ: Խոսքը չունի հարուստ բառապաշար, առկա են ոճական բնույթի սխալներ. Կարողացել են գրական կերպարները բնութագրել	Մասնակցում է, եթե քաջալերում են	Քիչ քանակի ձևեր կիրառում է սովորական կարգով
Անբավարար	Աշխատանքը չի բավարարում ներկայացված պահանջներին	Մեկուսացված է, չի աշխատում	Մի քանի ձևեր կիրառում է սխալներով

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը մի փոքր ավելի ճանաչելի ու հասկանալի է դարձնում Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը: Պոեմի թողած անկրկնելի տպավորությունը պայմանավորված է բանաստեղծի հախուռն, կրակոտ զգացմունքի և փիլիսոփայական խոհերի միասնությամբ: Այս ձևով ես հասնում եմ վերջնարդյունքներին՝

Հասկանում և վեր հանում է տեքստի գլխավոր գաղափարը:

Գտնում է գլխավոր առանցքային հարցադրումները, ճանաչում արդիականությունը, հիմնավորում՝ կյանքից և գրականությունից գտնելով համապատասխան օրինակներ:

Ուսումնասիրում և մեկնաբանում է ստեղծագործության բառապաշարը:

Հասկանում և մեկնաբանում է խոսքի արտահայտչամիջոցների կիրառությունը՝ միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով:

Համեմատում, զուգադրում և հակադրում է տեքստերը:

Ճանաչում և տարբերակում է ստեղծագործության սեռը, ժանրը՝ ելնելով գրական առանցքային առանձնահատկություններից:

Մեկնաբանում է գրական երկի, գրական կերպարի զարգացման պատճառահետևանքային կապերը, մեկնաբանում է՝ ելնելով ժանրային առանձնահատկություններից:

Համեմատում՝ համադրում և հակադրում է տարբեր հեղինակների կողմից կերտված կերպարների առանձնահատկությունները:

Գրականության ցանկ

1.Թորգոմ Ձուհարյան-«Հայ գրականության մեթոդիկա»- Երևան-1972

2.Հ. Ղանալանյան «Ավետիք Իսահակյան» - Երևան 1955թ.

3.Աննա Պետրոսյան «Բոլոր ժամանակների Հայաստանը»-Երևան 2013

4.Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան «Հայ գրականության դասագիրք 11 դասարան» 2015թ

5.Ավետիք Իսահակյան Երկեր

6.https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

7.https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նոր ոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Ինտերնետ-ռեսուսներ

1.https://learningapps.org/watch?v=pd92a51h322- հոմանիշներ1

2.https://learningapps.org/watch?v=pex7tq6a522 – հոմանիշներ2

3.https://learningapps.org/watch?v=pgebqpc2k22 - պոեմի պատկերավոր արտահայտչամիջոցները

4.https://learningapps.org/watch?v=pjppxzc8k22 – միավորային գնահատում

5.https://docs.google.com/presentation/d/1jR4bnThiNt3_W4vSuu6rE3ryXdSkQGBM/edit?usp=sharing&ouid=104784949992122369223&rtpof=true&sd=true- Սահկահանդես

6.https://sway.office.com/F5b1hPFGH10zSaup?ref

7.https://sway.office.com/6WdqALbhovZXjwtI?ref

8.https://1drv.ms/p/s!AmxK-UMRoJH1iWRrdpOjvatUpd_S?e=qDMwgK Սահկահանդես

9.https://docs.google.com/presentation/d/1eO10vH6-aYSBnK_jGeLA_gqD7uM8q19P/edit?usp=sharing&ouid=100557854254349955198&rtpof=true&sd=true Սահկահանդես